ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

Հարցաքննութիւններն սկսուեցան Ճեմարանում ապրիլի 12-ին և տևեցին մինչև մայիսի 26-ը։ Քննուում էին միայն Զ. դասարանն ու լսարանները (Ա. և Բ. լսարանն այն աւարկաներից միայն, որոնց դասընթացքը աւարտուում է նոյն լսարանում). միւս դասարաններում ուսումը շարունակուեց մինչև մայիսի 19-ը։ Ճեմարանն աւարտեցին այս տարի 12 հոգի, որոնք են. 1) Թադէոսեան Յովհաննէս, Երևանցի. 2) Խաչատրեան Արեղնազով, Իգդիրցի. 3) Շահրազեան Արտաշէս, Դաւրիժեցի. 4) Պետրոսեան Գէորգ, Թէհրանցի. 5) Սիմէոնեան Արսէն, Տփխիսեցի. 6) Տէր Գրիգորեան Եղիշէ, Ուտեաց Մէջլիս գիւղից. 7) Տէր Թովմասեան (Թովմաղեան) Գէորգ, Վանեցի. 8) Տէր Ղազարեան Խաչիկ, Տփխիսեցի. 9) Տէր Պօղոսեան Աւետիք, Լոռու Վարդաբլուր գիւղից. 10) Տէր Սահակեան Սենեքերիմ, Լոռու Ագարակ գիւղից. 11) Տէր Վարդանեան Աղէքսանդր, Պարսկաստանի Մարաղա քաղաքից. 12) Սարգսեան Գեղամ, Շուշեցի։ Վերջինս ուսումնական տարուայ սկզբներին ելեր էր Ճեմարանից. յետոյ խնդիրքով իրաւունք ստացաւ վերջնական քննութիւն տալու և ընդունեց այդպիսով աւարտման վկայական։—Աւարտողներից 4 հոգի ստացել են առաջին կարգի մրցանակ (յոյժ գովելի), մնացած 8-ը Բ. կարգի (գովելի). 6 հոգի ուրարակիր են, որոնցից մի քանիսը պատրաստուում են ժամանակին քահանայանալու, իսկ մի երկուսը կուսակրօնութիւն ընդունելու միաբ ունին. միւսներից 2 հոգի ցանկութիւն են յայտնել այժմէն իսկ կուսակրօն լինելու և սարկաւագ ձեռնադրուելու։

Վաղաժամ տրտունջներ եղան, թէ Ճեմարանաւարտներից ոչ ոք չի կամենում Մ. Աթոռի միաբան դրուիլ, մինչդեռ առաջ իրր խմբերով են եղել, և թէ ուրարակիրներն իրենց՝ ձեի համար ստացած, ուրարներն Ճեմարանից ելնելուց յետոյ ծալում մի կողմ են դնում։ Թոյլ տրուի մեզ նկատել նախ, որ ոչ մի տարուայ ուսումնաւարտներ խմբովին միաբան չեն դրուել, այլ եղած մի երկու փոքր խմբերը կազմուել են աւարտած ու չաւարտած զանազան կարգերից. իսկ չաւարտածներին սարկաւագ ձեռնադրելու մի քանի անյարմարութիւնները նկատելով՝ Ճեմարանի Վարչութիւնը վերջին տարիները չի կամեցել այլևս այդպիսի խմբեր կազմակերպել. մինչդեռ ամէն տարուայ աւարտողներից կուսակրօնութիւն ընդունողներ եղել են։ Ապա, ինչ վերաբերում է ուրարակիրներին՝ մի քանի հոգի նոցանից արդէն հոգևորական եղել են կամ պատրաստուում են մօտ ժամանակներում լինելու. իսկ միւսներից մեզ յայտնի չէ դեռ ոչ մէկը, որ մի հեռաւոր ապագէզ ընտրելով կամ ուրիշ նշանով ցոյց տուած լինէր, թէ այլևս հոգևորական լինելու չէ։ Եթէ գտնուելով այնպիսի հասարակութեան մէջ, որ «տիրացու» արհամարհական կոչումով հաղածում է ամէն ճեմարանականի, ամէն մի երիտասարդի, որ կհամարձակուի ժամանակի հագնել. անընդունակ լինելով քահանայանալու համար այն միջոցները գործ դնելու, որ գործ են դնում յաճախ ուրիշները. այնպիսի դիւանատներից կախումն ունենալով, որոնց մէջ գործերը տարիներով ձգձգուում են, երբեմն նոյն իսկ անպարտելի խոչընդոտներ հանդիպում ճեմարանականի առաջ նոցանից ոմանք կհարկադրուին ուրիշ ասպարէզ ընտրելու, այդտեղ նոցա ստացած կրթութիւնը ոչնչով մեղաւոր չէ։ Ըմբռնելու համար, թէ կրթութեան եղանակից որչափ բան է կախուած՝ բաւական է միայն ճեմարանաւարտներին մեր թեմական դպրոցներն աւարտողների հետ համեմատել. արդեօք սոցանից քանիսը կհամաձայնեն նոյն իսկ մի քանի օրով ուրար կրելու և եկեղեցում սպասաւորելու։ Ի՞նչը կարող է արդեօք հրապուրել մեր ժամանակում մի երիտասարդ մարդու առանց ներքին տրամադրութեան հոգևոր կոչում ընդունելու։ Իսկ թէ ճեմարանի ուսանողներն այնքան անխելք լինել չեն կարող, որ ձեի համար ուրար առնեն՝ յայտնի պէտք է լինի նորանից, որ ուրարակրութիւնը բաւական ծանր պարտականութիւններ է դնում. շատ յաճախ ա-

ռաւօտ երեկոյ ժամ դնալ, եկեղեցւոյ սպասաւորութեան վերայ դործ դնել ուսանողի համար շատ թանկագին ժամանակը։ *

Որպէս զի փարատած լինինք մասամբ մի ուրիշ թիւր կարծիք ևս, որ ճեմարանականների նկատմամբ յայտնուում է երբեմնակի՝ կցիշենք այստեղ այն շարադրութիւնները, որ ներկայացրել են այս տարուայ ուսումնաւարտները մրցանակ ձեռք բերելու համար։ ա) Գրիգոր Տաթեւացին և իւր դպրոցը. բ) Հայոց եկեղեցական երաժշտութիւնը է—ԺԴ. դար. գ) ս. Ներսէս Շնորհալու հոգևոր երկերը. դ) Հայոց եկեղեցական դատաստանն ըստ Մխիթար Դոշի. ե) Մ. Աթոռի մատենադարանի «Գիրք պատճառաց» կոչուած ձեռագիրների մատենագրական ուսումնասիրութիւնը. զ) Սմբատ Գունդստապլի պատմութեան բառարանը կազմել. է) «Անանիայի Հայոց վարդապետի բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» անտիպ դրուածքը՝ Մ. Աթոռի մատենադարանի բոլոր ձեռագիր օրինակները միմեանց հետ համեմատելով, դրի առնել, ուսումնասիրել և պատրաստել տպագրութեան համար. ը) Քահանայութիւնը, կրօնաւորութիւնը և վարդապետութիւնը Մխիթար Դոշի դատաստանագրքի համաձայն. թ) Ունիթոռական շարժումը և Սիւնեաց վարդապետարանը. ժ) Մ. Աթոռի մատենադարանի հ. 153—170 ձեռագիր ասատուածաշունչները միմեանց հետ համեմատելով՝ ցոյց տալ նոցա մէջ գրքերի դասաւորութեան եղանակը և այդ նկատմամբ միմեանցից ունեցած տարբերութիւնը, աւելի և պակաս գրքերը, յիշատակարաններն ու նոցա պարունակած տեղեկութիւնները, ուրիշ աչքի ընկնող հանդամանքներ։ ժա) Հայոց ազգային եկեղեցական ժողովներն և նոցա գործերը մինչև Մանազկերտի ժողովը. ժբ) Դ. դարի հայոց կեանքն ըստ Փաւստոս Բիւզանդի։—Այլև իբրև նմուշ տպագրում ենք Արարատի այս համարի մէջ անցեալ տարուայ ուսումնաւարտ Տէր Մինասեան Երուանդ սարկաւագի ներկայացրած շարադրութեան մի հատուածը, որին ի լրումն կտպագրուի նաև Անանիա Սանահնեցու վերոյիշեալ դրուածքը, և հետզհետէ կարուին ուրիշ նմուշներ։

Ուսումնաւարտներն ըստ սովորութեան հոգեհանգիստ կատարեցին ճեմարանի հոգեւոյս Հիմնադրի դերեզմանի վերայ ս. Լուսաւորչի եղն ի Վիրապէն տօնի օրը, յունիս 2-ին՝ Միաբանութեան և խուռն բազմութեան ներկայութեամբ, և ուրարակիր Ա. Տէր Պողոսեան մի ուղերձ կարդաց այնչափ սրտալի ու սրտառուչ, որ բոլոր ունկնդիրներն յուզուեցան և ոմանց աչքին նոյն իսկ արտասուք էր երևում։

Անցեալ ուսումն. շրջանի ընթացքում ճեմարանն ունեցել է 223 դիշերօթիկ սաներ, որոնցից աւարտողներն, արձակուածներն ու այլևայլ պատճառներով կամովին հեռացածները հաշուելով՝ առ 1-ն սեպտեմբերի կմնան առնուազն 180—185 հոգի։ Եւ որովհետև վերջին տարիների փորձը ցոյց է տուել, որ ներկայ պայմաններում՝ առանց ճեմարանի տնտեսական դրութիւնն աւելի ապահովելու, եղած շէնքերի մէջ հիմնովին վերանորոգութիւններ անելու և նոր շէնքեր կառուցանելու՝ 200 սանից աւելի պահելու հնար չկայ, ուստի առաջիկայ տարուայ համար նոր ընդունուել կարող են առ առաւելն 15—20 հոգի։ մի քանիսն արդէն Վեհափառ Հայրապետի հրամանով ընդունուած են և պէտք է դան հեռաւոր վիճակներից։ միւս խնդրատուների համար ուրեմն շատ քիչ տեղ է մնում։ Այնուամենայնիւ, որպէս զի ճեմարան դիմողներին դիւրութիւն տուած լինինք և մի շարք թիւրիմացութիւնների առաջն առած՝ Արարատ-ի ներկայ համարին կից հրատարակում ենք ճեմարանի Մանկ. Խորհրդի ձեռքով կազմուած ծարագիրը այն առարկաների համար, որոնցից պէտք է քննութիւն տան Ա. դասարան մտնել ցան-

* Կարեւոր ենք համարում ի դէպ նկատել այստեղ, որ յաճախ դուրսն իբրև ճեմարանական կամ ճեմարանաւարտ յիշուում են այնպիսիները, որոնք կամ ճեմարանի դպրանոցական բաժինն են միայն աւարտել, կամ նոյն իսկ դասարաններից թերի ելել։ Պէտք է խորութիւն դնել դոցա և ճեմարանաւարտների մէջ և չերևակայել թէ ճեմարանի լսարաններն էլ ձևի համար են։

կացողները, նոցա ընդունելութեան պայմաններով մէկ տեղ։

Առաջիկայ ուսումն. տարուայ համար Ուսուցչական խմբի մէջ բաց են առ այժմ բարձր դասարանների ռուսաց լեզուի և մաթեմատիկական առարկաների ուսուցիչների ու երկու վերակացուների տեղեր։

Ճեմարանի մատենադարանի համար անցեալ ուսումն. շրջանի ընթացքում նուէր են ստացուել.

ա) 602 կտոր գիրք (466 ռուսերէն, 146 օտար լեզուներով և 10 հայերէն) Հանգուցեալ Գր. Ջանչեանի ճեմարանին կտակած գրադարանից.

բ) 147 կտոր արժէքաւոր հրատարակութիւններ Վ.սեմ. Կ. Եղեանից.

գ) 17 կտոր նախկին Հրատարակչական ընկերութիւնից.

դ) 79 կտոր այս տարի դպրանոցական բաժինն աւարտողների կազմած դասարանական գրադարանից.

ե) 118 կտոր Շնորհ. Եսայի սարկաւագից.

Սակաւաթիւ օրինակներով ուրիշ գանազան անձերից։

Պարտք ենք համարում յիշել, որ անցեալ ապրիլ ամսին հրատարակուած տեսչի տեղեկագրի մէջ մոռացուել է թիւրիմացութեամբ Ն. Նախիջևանի փոխանորդ Հ. Մուշէ վարդապետի ճեմարանի քսան և հինգամեակի առթիւ արած նուէրը՝ 273 կտոր ռուսերէն և հայերէն գրքեր, որոնցից անկազմներն ևս նորա հաշուով կազմուեցան։

Այլ և հանգուցեալ Թորէն եպիսկոպոսի յիշատակին Մոսկուայում մի քանի յարգողների մէջ ժողովուել և աշակերտաց ընթերցանութեան համար գրքեր գնելու պայմանով նուէր է ուղարկուել պ. Խաչատուր Բ. Յովհաննիսեանի ձեռքով 256 բուբլի, որի հաշուին մասամբ գրքեր գնուած են արդէն առանձին յանձնաժողովի ընտրութեամբ, մասամբ ևս պէտք է գնուին։

Մատենադարանի համար նուէր է ստացուել 100 ր. պ. Սարգիս Հախնազարեանից, որի հաշուին գնուեցան դիպուածաբար մեծ դիջումով վաճառուող գերմաներէն ընտիր ընթերցանութեան գրքեր։

100 ր. ևս Օդեսայից, պ. Մ. Մուրաեանից էր նուէր ստացուել՝ Արժ. Բենիկ վարդապետի ձեռքով, որ գործադրուել է գնելու համար, նոյնպէս դիպուածաբար դիջումով վաճառուող՝ Դրիմմի հանրահռչակ գերմաներէն բառարանի մինչև այժմ լոյս տեսած հատորները։



ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մշակ լրագրի 107 համարում մեղադրանքի ու լուտանքի մի ամբողջ հեղեղ է թափած Հայոց ազգի եւ Մայր Աթոռի գլխին այն պատճառով, որ իբր թէ Խաչատուր Աբովեանի թոռները՝ Վարդան Աբովեանի որդիք, վերջինիս մահից յետոյ անոք անապահով դրութեան մէջ են մնացել։ Թէ ինչով մեղապարտ է Հայոց ազգը, որ Խաչատուր Աբովեանի թոռները իրենց հօրից հարստութիւն չեն ժառանգել եւ «պիտի ձեռք մեկնեն բարերարներին, որպէս զի ապրեն, ուտում առնեն», այդ բացատրելը մեր կարողութիւնից վեր է. բայց կկամենայինք մի քանի տեղեկութիւններ տալ այն մասին, թէ Հայոց ազգն ու Մայր Աթոռը ինչպէս են վերաբերուել դէպի այդ որբերը, երբ նոքա անապահով են մնացել։

Վարդան Աբովեան մեռաւ իբրեւ ս. Էջմիածնի ճեմարանի ուսուցիչ։ Ճեմարանի վարչութիւնը դիմեց անմիջապէս Վեհափառ Հայրապետին, խնդրելով թոյլ տալ հանգանակութիւն բանալու յօգուտ նորա որբերի, եւ կենսաթոշակ նշանակել այրու համար։ Հանգանակութիւնը, ինչպէս ժամանակին «Արարատ»ի մէջ ծանուցուել է հետզհետէ, 3000 բուբլուց անցաւ. գոյացած գումարը բանկ տրուեցաւ որբերի անունով պայմանաւ, որ այրին ստանայ տոկոսիքը, մինչեւ նոցա չափահաս

ԾՐԱԳԻՐ

*այն առարկաների, որոնցից քննութիւն է պահանջու

Դ. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Զորս գործողութիւնները և պարզ անուանական թուերով խնդիրներ, լրիւ մինչև բարդ անուանական թուերը (Կանոնագիրք Վարձելեան, խնդրագիրք Евтушевскій)։

Ե.

Տարրական գիտելիք բնական պատմութիւնից (Դասագիրք Զ. Գրիգորեանի) և ընդհանուր աշխարհագրութիւնից (երկիր, հորիզոն, երկրի կողմերը, մայր ցամաքները, ծով և ովկիանոս ևն)։

Պայմաններ

ա. Ձեմարան մտնել ցանկացողները պէտք է խնդիր տան Վեհափառ Հայրապետի անունով ոչ ուշ քան յուլիսի 1-ը։

բ. Խնդրագրի հետ պիտի ներկայացնեն ծնընդեան և մկրտութեան, ծագկի պատուաստման և, եթէ եղած են որ և է դպրոցից, նաև ուսման և բարի վարքի վկայական։

գ. Առաջին դասարան մտնել ցանկացող պատանիները պէտք է լինեն 12—13 տարեկան հասակում։

դ. Իւրաքանչիւր նոր ընտրուած աշակերտ պարտաւոր է ներկայացնել դրաւական՝ օտար երկրներից 75 ռուբլի, Ռուսաստանի և Կովկասի հեռաւոր թեմերից 50 ռ. իսկ Երևանի թեմից 25 ռուբլի։

ե. Այն աշակերտները, որոնց խնդիրները ընդունուած են, քննութեան պէտք է ներկայանան օգոստոսի 25-ին։

զ. Քննութիւնից առաջ բոլոր ձեմարան ընդունուողներին կքննէ ձեմարանի բժիշկը, և միայն կատարելապէս առողջ պատանիները կընդունուին։ Ուստի ցանկալի է, որ ձեմարան դիմողները նախապէս բժշկական քննութեան ենթարկուած լինին։

է. Թոշակաւոր աշակերտների համար դրամական նպաստ վճարուում է տարեկան 200 Ռուբլի, կէսը սեպտեմբերին և կէսը յունուար ամսին։

Տպարան Մ. Աթոռոյ

Дозволено цензурою 26 Мая 1901 г. г. Тифлисъ